

ՌՈՒՍԱՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ՍԿԶԲԻՑ ՄԻՆԶԵԻ 70 — ԱԿԱՆ ԹԻԱԿԱՆԸ)


ՊԱՏՄԱ — ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(Շար. տես Բազմավեպ 1935, էջ 150)

ԳԱՐՐԻԷԼ ՍՈՒՆՆՈՒԿԵԱՆ

Նորագոյն թատերգութեան հիմնադիրն է Գարրիէլ Սունդուկեանը, որով սկսում է մի նոր էջ ռուսահայ թատերական գրականութեան մէջ:

Ինչո՞ւն է կայանում, սակայն, Սունդուկեանի դերը, նշանակութիւնը:



Գարրիէլ Սունդուկեան

Սունդուկեանի կատարած դերը բազմաբան է: Նրա տաղանդի շնորհիւ է, որ հին թատրոնը և դրաման ստանում են վերջնական մահացու հարած: Նա թատերգութիւնը պատմական կեղծ ողբերգութեան, պարզ կենցաղագրութեան շրջան-

ներից հանելով, տալիս է նոր կերպարանք և երանգ: Դրաման կապում է հասարակական կեանքի և գաղափարների հետ և, որ գլխաւորն է, կենցաղային կոմէդիան դնում իր արժանի բարձրութեան վրայ: Սկսում է թատերական գրականութեան աշխարհի փառաւոր յաղթանակը:

Նրա վրձինած պիէսները — «Գիշերւայ սարը խէր է», «Խաթաբալա», «Օսկան Պետրովիչը էն կինը», «Էլի մէկ զոհ», «Քանդած օջախ», «Պէպո», «Ամուսիններ» — այդ ռէալիզմի ցայտուն կոթողներն են, որոնք հարազատ գոյներով ցոլացնում են թիֆլիսի հայկական միջավայրի և հասարակութեան տարբեր խաւերի ճշգրիտ պատկերը, արտացոլում են գլխաւորապէս հին թիֆլիսի վաճառական դասակարգի և ժողովրդի ստորին դասի կեանքը՝ իր ուրոյն կենցաղով, տարազով և բարբառով: Իրար հանդէպ կանգնած են այնտեղ հին և նոր սերնդի ներկայացուցիչները՝ իրենց տարբեր աշխարհայեացքով, ձգտումներով և սովորութիւններով: Այդ բոլորը Սունդուկեանը գծել է վարպետ վրձինով: Ահա թէ ինչու այդ պիէսները, բացի գրական-գեղարեստական արժէքից, ունին նաեւ պատմա — ազգագրական նշանակութիւն: Փաստ է, որ հին թիֆլիսն անհետանում, չքանում է աստիճանաբար: Փոխում է քաղաքի տեսարանը, նրա ինքնատիպ երանգը: Փաստ է և այն, որ օրէց օր ձեւափոխում է նաեւ թիֆլիսի հայ հասարակութեան ուրոյն կենցաղը, տարազը,

բարբառը, սովորութիւնները: Մի որոշ ժամանակից յետոյ, անկասկած, հասարակական այդ առանձնայատուկ գծերից ոչ մի հետք չի մնար: Բայց Սունդուկեանի կոմէդիաները կը մնան իրրեւ թանկագին փաստաթղթեր, պատմական վաւերագրեր, որոնք հայելու նման կը ցուցադրեն



Գ. Սունդուկեանը և Պէպոն

հին թիֆլիսը և հասարակութեան տարբեր խաւերի պատկերը՝ իրենց բնորոշ և առանձնայատուկ գծերով:

Սունդուկեանի դերը, սակայն, դրանով էլ չի սահմանափակում: Նա առաջին դրամատուրգն է, որ իր պիէսներով ազատագրում է դերասանին հին կեղծ դրամայի ստեղծած կապանքներից: Այդտեղ էլ նա կանգ չի առնում: Իր պիէսներով հայ հասարակութեանն աւելի սերտ կապերով միացնում է հայկական թատրոնի հետ, էլ աւելի ժողովրդականացնում թատրոնի գաղափարը: Վերջապէս նա առաջ է բերում բեմական այնպիսի տաղանդներ—

Գէորգ Չմշկեան, Միհրդատ Ամերիկեան, Գէորգ Միրադեան, Սաթենիկ Չմշկեան, Ամիրան Մանդինեան, Սիմէօն Հախումեան, Գէորգ Տէր — Դաւթեան, Քէթեան Սրամեան, Վարդուհի և ուրիշներ, — որոնք կարողանում են նրա գծագրած ռէալիստական տիպերը ցայտուն կերպով դրսեւորել բեմի վրայ: Ո՞վ կարող է մոռանալ նրա քանդակած իրական տիպերը — Պէպոն, Զիմզիմովը, Էֆէմիան, Կակուլին, Գիքօն, Շուշանը, Գարասիմ Եակուլիչ Չամբախովը, Խամիբերին, Մարգրիտը, Եսային, Մասիսեանը, որոնք կապած են վերոյիշեալ Դերասան-Դերասանուհիների անւան հետ: Ահա թէ ինչու Գարրիէլ Սունդուկեանի անունն ամենասերտ կերպով շաղկապւած է հայ նորագոյն թատրոնի պատմութեան հետ:

ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչպիսի ազգեցութիւններ է կրել Սունդուկեանը, որ հեղինակները ներգործել են նրա աշխարհայեացքի վրայ:

Ինքը, Սունդուկեանը, այսպէս է լուսաւորում ազգեցութիւնների հարցը.

— «... Ծնւած ու կրթւած լինելով Ռուսիայում, աւարտելով ռուս գիմնազական, ռուս համալսարանական ուսման ընթացքը, լսելով ռուս պրօֆէսորների, մանաւանդ գրականութեան պրօֆէսոր Նիկիտէնկոյին Պետերբուրգի համալսարանում, չորս տարւայ (1846 — 1850 թ.) ընթացքում, ես բնական է պէտք է գտնէի ռուս մտաւոր կեանքի ազգեցութեան տակ:

Ես սիրեցի թատրոնը և բաց չեմ թողել ոչ մի յայտնի պիէս, որ ներկայացուում էր Ալէքսանդրեան թատրոնում, որտեղ իրանց խաղով ապշեցնում էին ինձ Մոսկւայից եկած Մարտինով, Կարատիկին, Շչէպկին և ուրիշ շատերը: Շչէպկին — Ֆամուսով հիմա էլ աչքիս առջեւն է և թւում է, թէ ես հիմա էլ եմ լսում նրա ձայնը, թէպէտ նրանից յետոյ արդէն 50 տարուց աւելի է անցել»:

ԱՐԻԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԿԱՐՄԻՔԸ

Սունդուկեանի Գրական-Կուլտուրական խոշոր դերն արձանագրել են ոչ միայն հայ և օտար մամուլը, այլ և մեծ արեւա-

տագէտները: Յայտնի ողբերգու Բոսսին, վրաց յայտնի գրող—քննադատ Կիտա Ս. Բաշիձէն հիացմունքով խօսում են Սունդուկեանի գրական արժանիքների մասին, իսկ Շիրվանզադէն այսպիսի գոյներով է բնորոշում նրա գրական դերը:

— «... Մինչեւ Սունդուկեանցը հայ թատերական գրականութիւնը չի համապատասխանել իւր կոչմանը ոչ իւր ներքին իմաստով և ոչ արտաքին ձեւով: Մինչեւ Սունդուկեանցը թատրոնը հայ դրամատուրգների համար եղել է ուրիշ ոչինչ, եթէ ոչ մի տաճար, որի բեմին իրանք քարոզել են ազգային կամ կրօնական մոլեռանդ գաղափարներ: Եւ փոխանակ բեմական — գեղարվեստական երկերի, նրանք կերակրել են մեզ վարդապետական քարոզներով, աւելի կամ պակաս տաղանդով յօրինւած:

Ասպարէզ է գալիս Սունդուկեանցը և մի հարւածով կտրում է բոլոր կապերը իւր նախորդների ու ժամանակակիցների հետ:

Իսկական վերանորոգչի համարձակութեամբ նա ասում է. «որ այդպէս չեն յօրինել թատերական — գեղարվեստական երկերը, ինչպէս յօրինում էք դուք ձեր Շոշլանիկը, Վարդաւանց պատերազմը, Արա գեղեցիկը և այլն, այլ ահա թէ ինչպէս:

Եւ նա յօրինում է իւր անմահ Պէպօն:

Ահա այս տեսակէտից Սունդուկեանցն արդարեւ հայ թատերագրութեան հիմնադիրն է:

Անկասկած, Սունդուկեանցն ինքնաբերաբար է գալիս այն եզրակացութեան, որ հայը չունի թատերական գրականութիւն բառիս իսկական իմաստով: Բայց ինքնախաբէութիւն կը լինի հերքել՝ այն խորն ազդեցութիւնը, որ ունեցել է նրա վրայ եւրոպական գրականութիւնը, մանաւանդ ռուսականը, սկսած Գրիբօեդովից, Լերմոնտովից և Գոգօլից մինչեւ իւր ժամանակակից Օստրովսկին:

Սակայն որքան եւս խորն է եղել այդ ազդեցութիւնը, չի կարողացել Սունդուկեանցի մէջ աղաւաղել ինքնուրոյնութեան ոգին: Այն նրա Պէպօն ու Զիւլֆալնուր և ոչ մանաւանդ Գիքօն ու Կակոշիկն չեն կրում իրանց վրայ նմանողութեան և ոչ մի նշոյլ: Բոլոր այդ տիպերը, ինչպէս և նրա միւս պիէսների գործող անձինք, ազգային են: Այնքան ազգային, որ յաճախ նոյնիսկ ցեղական, սպեսիֆիկ բնաւորութիւն են ստանում: Լինելով դրամատուրգ

եւրոպական իմաստով, Սունդուկեանցը մնաց անաղարտ ազգային ստեղծագործող:

Այս է, որ այնքան հրապույր է տալիս նրա երկերին և այնքան մտերիմ դարձնում նրանց մեր սրտերին:

Սունդուկեանցն առաջինը եղաւ, որ մեր թատերական գրականութեան մէջ մտցրեց հոգեբանական վերլուծում: Մինչեւ նրա ասպարէզ գալը հայ բեմի վրայ չըջում էին անշուշտ, անարին մանէկէններ, որոնք գրամօֆօնի նման արտասանում էին հեղինակների մտքերն ու գաղափարները:

Սունդուկեանցն առաջինն եղաւ, որ բեմ դուրս բերեց մարդուն իւր ներքին աշխարհով, իւր լաւ ու վատ կողմերով Նա վաղեցից հայ բեմից մեռելներին և նրանց տեղը դրեց կենդանի էակներ:

Այս է երկրորդ արժանաւորութիւնը Սունդուկեանցի:

Բայց ես կը կամենայի ուշադրութիւն դարձնել անմահ դրամատուրգի վրձինի մի ուրիշ, աւելի նշանաւոր յատկութեան վրայ... Բնութիւնից առատօրէն օժտւած իսկական օտեղծագործողի, ճշմարիտ բանաստեղծի բնազդով, նա զգաց, որ չը կայ կեանքից դուրս ոչ երջանկութիւն, ոչ թշուառութիւն, ոչ չարք և ոչ բարին, ոչ տգեղն և ոչ գեղեցիկը, չը կայ արեւտ, չը կայ իսկական ստեղծագործութիւն: Նա զգաց, որ սխալում են չարաչար նրանք, որոնք կեանքից դուրս են փնտրում գեղեցկութիւնը: Եւ ոչ միայն սխալում են, այլ և ինքնասպանութիւն են գործում: Նա ըմբռնեց, որ համաշխարհային գրականութեան մէջ, սկսած Շէքսպիրից ու Սերվանտեսից մինչեւ մեր օրերը, միայն այն երկերն են դիմացել ժամանակի կործանիչ ազդեցութեանը, որոնք կարելոյն չափ խորն են թափանցել կեանքը »:

Ի՞նչ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԻ ՆԵՐՔՈՑ Է ԳՐԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ ԻՐ ՊԵՏՆԵՐԸ

Թատրոնական գրականութեան այս կարեւոր հարցը պարզելու նպատակով թերթեցինք ոչ միայն Սունդուկեանին ներքեւ լած գեղարվեստական մամուլը, այլ և ռուսամասիրեցիներ նրա անտիպ ձեռագիրները: Թէ՛ տպագրիչների և թէ՛ ձեռագիրների մէջ գտանք մի քանի փաստական

տեւաններ, ուր տաղանդաւոր դրամատուրգը լուսաբանում է, թէ ինք ինչ հանգամանքների ներքոյ է գրել իւր ամէն մի պիէսը: Պէտք է նշել, որ այդ կարեւոր էջերը հայ գրականութեան պատմութեան մէջ մինչեւ օրս էլ լրիւ չեն լուսաբանւած: Ահա այդ կարեւոր բացն է, որ արձանագրում և լրացնում ենք այստեղ: Իւրաքանչիւր պիէսի բովանդակութեան փոխարէն տալիս ենք թէ՛ հեղինակի և թէ՛ թատրոնական հին գործիչների լուսաբանութիւնները, թէ ամէն մի պիէս ինչ դէպքի և հանգամանքի ծնունդ է, ինչ ազդեցութեան ներքոյ է գրւած, ո՞վքեր են հերոսների կենդանի տիպերը, հասարակութեան ո՞ր խաւից են վերցւած, ո՞ր միջավայրից, ո՞վ է խթան հանդիսացել իւրաքանչիւր պիէսի կառուցմանը և այլն: Ահա իւրաքանչիւր պիէսի պատկերը:

«ԳԻՇԵՐԻԱՅ ՍԱԲՐԸ ԽԷՐ Է» — Կատակ մէկ արարածով

Առաջին անգամ թերկայացւած է 1863 թւի հոկտեմբեր 23-ին Թիֆլիսում

— Երիտասարդութեան ամենավառւոյն ժամանակն էր, — գրում է Սունդուկեանը: Խտալացի մի ինչ որ անտրպրինեօր կապալով էր վերցրել այն ժամանակւայ թաւամշեանի թատրոնը և օպերային խումբ էր պահում: Ներկայացումներին յաճախող ժողովրդի ամենամեծ թիւը կազմում էին հայերը, որոնք բացի դէկորացիոնների շքեղութիւնից ու դերասանների փայլուն զգեստներից, ուրիշ ոչինչով չէին հետազգեստներ: Եւ չէին էլ կարող հետաքրքրւել, որովհետեւ ոչ երաժշտութիւնն էին հասկանում և ոչ էլ խտալերէնի այբուբենը գիտէին: Ահա այդ ժամանակ էր, որ իմ մէջ միտք յղացաւ, թէ որքան նպատամէջ միտք յղացաւ, թէ հայերս էլ մեր կայարմար կը լինէր, եթէ հայերս էլ մեր սեփական ներկայացումներն ունենայինք, մեր կեանքը պատկերացնէինք և մեր սրտին մեր կեանքը պատկերացնէինք: Հայմօտիկ ցաւ ու դարդից պատմէինք: Հայկական իրականութիւնից մի պիէս գրելու միտքը ինձ գիշեր ցերեկ հանգիստ չէր տալիս. նիւթ էի փնտրում, բայց չէի կարո-

ղանում գտնել: Հէնց այդ ժամանակն էր, որ յիշեալ խտալացի անտրպրինեօրը նիւթական խոշոր վնաս կրելով, թողեց թիֆլիսն ու հեռացաւ իր խմբով: Այդ բանն իմ մէջ մի այսպիսի կուրեօզ միտք ծագեցրեց. ինչ աչքով կը նայէր արդեօք հայ վաճառականն այդ դիֆիցիտի վրայ և ի՞նչ կարծիք պիտի յայտնէր այդ օրինակ առեւտրական ձեռնարկութեան վրայ: Այս միտքն էր, որ սկիզբ դրեց «Գիշերւայ սաբըր խէր է» վոդեւիլս գրելուն, որին ես իմ գրածքներից ամենաթոյլն եմ համարում:

Վոդեւիլը բեմ հանեց և շատերի կողմից նոյնիսկ հաւանութիւն գտաւ: Սակայն ես այդ բանին նշանակութիւն չտւի. իմ անդրանիկ պիէսի ամենախիստ քննադատը ես էի: Նրա առաջին իսկ ներկայացումից ես նկատեցի բոլոր թերութիւններն ու համոզեցի, որ ծաղրական տիպերն ու կարիկատուրաներ բեմ հանելը, ինչպէս արել էին իմ նախորդները՝ Տէր — Գրիգորեանն ու Փանդինեանը, ոչ մի նպատակ չունէր: Հարկաւոր էր իրական տիպերի ճշգրիտ պատկերներ հանդէս բերել, որով թէ թատրոնը կանգնած կը լինէր իւր կոչման բարձրութեան վրայ և թէ ժողովուրդը սերտ կերպով կը կապէր նրա հետ:

«ԽԱԹԱԲԱԼԱ» — Կատակերգութիւն չորս արարածով

Առաջին անգամ բեմադրւած է 1866 թւի Ապրիլին Թիֆլիսում

— Իմ Ռուսաստանից թիֆլիս վերադառնալու օրն, — պատմում է Սունդուկեանը, — ինձ պատահեց մի դէպք: Փողոցով անցնելիս, պատահեցի մի չափազանց գեղեցիկ կնոջ, որ գրաւելով ուշադրութիւնս, շատ խորը տպաւորութիւն թողեց ինձ վրայ: Յայտնեցի այդ մասին մօրս, և նա եւս ինձ նման օրիորդի տեղ ընդունելով տեսածս կնոջը, շատ ուրախացաւ մտադրութեանս վրայ և սկսեց հարսնախօսութեան պատրաստութիւններ տեսնել:

Երբ բանն արդէն գլուխ եկաւ արծաւ, գնացի աղջկան իրենց տանը տեսնելու և

նշան տալու: Հայրը դուրս բերեց իր աղջկան ինձ ցոյց տալու, և դէմս կանգնեց այնպիսի մի այլանդակ արարած, որ ես առանց մնաք բարեւ ասելու և առանց յետ նայելու, գլխարկս վերցրի ու դուրս փախայ սենեակից: Բանից դուրս եկաւ, որ ես ոչ թէ այն մարդու աղջկան էի տեսել, այլ մի ուրիշին, որը վաղուց արդէն աւուսնացած է եղել: Օրիորդի հայրն էլ էր գիտակցել այդ, բայց ուզեցել էր մի կերպ աչքերս փակել և առդացնել իր սպրանքը, որին ինչպէս յետոյ իմացայ, գլխից շողաւ համար շատ օյիւններ էր հանել, բայց ոչ մի կերպ չէր յաջողել: Այդ դէպքը նիւթ ծառայեց ինձ իմ երկրորդ պիէսին՝ «Խաթարալա» — ի համար, որի մէջ դուրս բերւած գլխաւոր տիպերի հետ շփուել ու յարաբերութեանց մէջ եմ եղել, իսկ Գէորգ Մասիսեանը հէնց ինքս եմ: Ստեղծել եմ, ի հարկէ, ինձ հետ պատահած դէպքի հետ ոչ մի կապ ու առնչութիւն չունեցող և այլ տիպեր, որոնցից ամենագլխաւորն է Խամփերի մօցիքուլը: Այդ տիպը նկարագրելիս աչքի առաջ եմ ունեցել այն ժամանակ թիֆլիսում լաւ յայտնի չիտիկոպի շինող և մօցիքուլեանք պարապող Օսանին, որը մեր տան բարեկամն էր և շատ էր սիրում ինձ: «Խաթարալա» — ի մօցիքուլի անունը հէնց սկզբից Օսան էի դրել, բայց մի օր, նրա առաջին ներկայացման կրկնութեան ժամանակ, ներս ընկաւ Օսանը սենեակ, պարկեց յատակի վրայ և խանգարելով կրկնութիւնը, դիմեց ինձ աղաչական ձայնով.

— Գարբիէլ ջան, գուցիս ինձ մօրթէ, օղօնց կի իմ անումէ էտ կամեղիումը չլի: Այդ է պատճառը, որ ես Օսան անունը փոխեցի Խամփերի:

Քէթեւանը նկարագրելիս իմ մօրն եմ աչքի առաջ ունեցել:

«Խաթարալա» — ն խաղացւեց և ես գոհ մնացի իմ պիէսից:

«ԽԱԹԱՐԱԼԱ» — Ի ՏԻՊԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԱՐԺԱՌԻԹ Ե ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ՆԱԵՒ ՄԻ ՊԱՏԿԵՐ

— Պ. Սունդուկեանցը, որ միշտ հետու էր պահում իրան մեզանից, — գրում է դերասան Գ. Չմշկեանը, — սկսեց մօտենալ մեզ և կարճ միջոցում իմ և նորա մէջ կայացաւ մօտիկ ծանօթութիւն, անգամ բարեկամական յարաբերութիւն:

Մէկ առաւօտ (1866 թ.), չգիտեմ ինչ բանի առիթով, ես մտայ նորա մօտ: Նա ինձ ցոյց տաւ մէկ պատկեր, որ կախած էր նորա գրասեղանի դիմաց: Պատկերը ներկայացնում էր մէկ տան ֆասադ, որի պատուհանից երեւում էր մէկ փոքր սիւրուն աղջկայ գլուխ՝ ժպտը շրթունքին: այդ պատուհանի տակ նկարած էր մէկ տակառ, որի վերայ կանգնած էր մէկ եւրիտասարդ և առաջարկում էր սիրուն աղջկան ընդունել իւր ձեռքի վարդափունջը:

Պ. Սունդուկեանցն ինձ յայտնեց այդ ժամանակ, թէ այդ պատկերը նորան միտք է տեւել մէկ օրինաւոր և ամբողջ պիէս գրել: Եւ նա սկսեց բացատրել պիէսի նիւթը: Ես նկատեցի այդ խօսակցութեան ժամանակ, որ ճշմարիտ նորա գլխի մէջ եփուում է մէկ հարուստ նիւթ, բայց որ նա չի վստահանում իրագործել իւր միտքը:

— Դուք ազատ էք այսօր, հարցրի ես նորան: Նա ինձ պատասխանեց, որ կարող է այդ օրը դուրս չգնալ տանից:

— Ուրեմն, ասացի ես, պարապեցէք այսօր ինձ հետ և տեսնենք ինչ դուրս կգայ:

Նա փոքր ինչ տատանելուց յետոյ համաձայնեցաւ: Մենք մօտանք, ինչպէս լաւ յիշում եմ, առաւօտեան ինը ժամին նորա դահլիճը, փակեցինք դռները, կարգադրեցինք, որ ոչ ոք մեզ չանհանգստացնէ և սկսեցինք գործը:

Ես առայ թուղթ ու գրիչը, նստեցի սեղանի մօտ և Պ. Սունդուկեանցը սկսեց անց ու դարձ անելով թելադրել ինձ:

Երկու թէ երեք օր, լաւ չեմ յիշում, Սունդուկեանցի նիւթը իրագործեցաւ և

մենք ստացանք մէկ հաստ տետրակ երկու գործողութիւնով և չորս պատկերով, որին կնքեցինք վերջը «Խաթարալա»:

(Գ. Չմշկեանի թղթերից)

«ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉԵՆ ԵՆ ԿԻՆՔՈՒՄԸ» — Կատակերգութիւն մէկ արարածով

Առաջին ամգամ մերկայացւած է թիֆլիսի քաղաքային թատրոնում 1866 թւի Ապրիլ 12-ին

Այս պիէսն առաջ կոչւել է՝ «Օսկան Պետրովիչն էրագումը», ապա՝ «Օսկան Պետրովիչը դժոխքում»: Տպագրւած է 1899 թւին «Թատրոն» հանդիսում և ներկած է դերասան Արտաշէս Սարխաւեանի յիշատակին:

«ԷԼԻ ՄԵԿ ԶՈՂ» — Կատակերգութիւն հինգ արարածով

Առաջին ամգամ մերկայացւած է 1870 թ. Մայիսի 4-ին թիֆլիսում

«Օսկան Պետրովիչից» յետոյ սկսեցի գրել «Էլի մէկ զոհ» կօմէդիան, — կարդում ենք Սունդուկեանի ձեռագրում, — որը սկզբում երեք գործողութեամբ էր «Մախլաս» վերնագրով: Այդ ձեւով ներկայացւեց մի քանի անգամ, յետոյ շինեցի չորս, իսկ Պարիզում եղած ժամանակս էլ մի անգամ ներկայ լինելով այնտեղի թատրոններից մէկում, ուր խաղում էին մի ինչ որ կատակերգութիւն և շատ հաւանելով այն, տակերգութիւն և շատ ծագեց մի գործողութիւն իմ մէջ միտք ծագեց «Էլի մէկ զոհ» — ին յիշեալ եւս աւելացնել «Էլի մէկ զոհ» — ին յիշեալ կատակերգութեան նմանութեամբ, որ շատ յարմար կը լինէր, և վերադառնալով Պարիզից, գրեցի հինգերորդ գործողութիւն եւս, որով պիէսը վերջնականապէս աւարտեց: Այստեղ աւելորդ չեմ համարում միջանկեալ ասել, որ շատերը կարծում էին, թէ ես Ֆրանսիա եղած ժամանակս սովորեցի ֆրանսերէն լեզուն: Բոլորովին այդպէս չէր: Ես ֆրանսերէն գիտէի, առանց դեռ Ֆրանսիայի երեսը տեսնելու: Այդ լեզուով էի խօսում իմ դաստիարակ Ջրպետեանի ընտանիքում, որի կինը ֆրանսուհի էր:

«ՊԷՊՈ» — Կօմէդիա երեք արարածով

Առաջին ամգամ մերկայացւած է 1871 թ. Ապրիլի 30-ին թիֆլիսի թատրոնում

«Պէպօ» գրելու միտքը յղացաւ հեղինակի մէջ, — գրում է դերասան Գ. Չմշկեանը, — մի հասարակ հանգամանքից: Մի օր, հանգուցեալ բժիշկ Փուլինեանցի փոխադրած — անմահ Մօլիէրի — «Բոնի աւուսնութիւն» պիէսի մէջ, ես խաղում էի հայացրած կինտի — Լեկոստի (սիրահարի) դերը, ուր այդ անձնաւորութիւնն իւր փեսացու վաւաշոտ, նմանապէս հայացրած Չգանարէլին, ծանրակշիռ բռնեցընեցով ստիպում է ամուսնանալ իւր քրոջ հետ և այդպիսով վերջ է տալիս նրա տառանման:

Հէնց այդ երեկոյ, ներկայացման գիշերը, խաղը վերջացնելուց յետոյ, Սունդուկեանցը մտաւ բեմ և յայտնեց ինձ, որ իմ խաղը զարթեցրեց նորա մէջ մի հարց՝ թէ ինչպէս կը վարէր մի որեւիցէ ձկնորս Պէպօ, այդ տեսակ հայ Չգանարէլի հետ, որը համարձակէր մերթել այն Պէպօին վճարելու նորան իւր պարտքը:

Այնուհետեւ, 1870 թւի սկզբում, քնաբանը երկար ու բարակ ըննելուց յետոյ, Սունդուկեանցը սկսեց իր սովորական թելադրութիւնը:

Այնուհետեւ ամէն օր ես գնում էի Սունդուկեանցի մօտ, առնում էի գրիչը ձեռքս և նստում էի սեղանի մօտ: Այդ տեսակ իմ վարմունքը քաջալերում էր նորան և նա սկսում էր ոգեւորել: Յունիսի սկզբում Սունդուկեանցը տեղափոխեց կըրծանիս անւանւած այգեստանը, և ահա այդտեղ շարունակեց «Պէպօ» — ի գրութիւնը:

Այգու մէջ կար երկու յարկանի քաւաչէն տուն մէզօնինով¹, որի փոքրիկ պատշգամբից և պատուհաններից բացւում էր տեսարան դէպի կանանչազարդ լեռը և նորա ստորոտում՝ ձորի մէջ փռւած այգիները:

1. Կիսայարկ, որ կառուցւում է գլխաւոր յարկի վրայ:

Առաւօտները կանուխ, ժամի եօթին, մենք բարձրանում էինք այդ մէզօնինը. այնտեղ ես նստում էի սեղանի մօտ, բաց դռան և պատուհանների առաջ, և գրէի ձեռքս առնելով, սպասում էի թելադրութեան: Սունդուկեանցը ճեմելով թելադրում էր, ես գրում էի: Պատահում էր, որ երբեմն ամբողջ ժամերով Սունդուկեանցը կանգ էր առնում և երբ նիւթը արդէն մշակւած էր համարում, մենք պարապում էինք մինչեւ ժամի երկուսը կամ երեքը, և ճաշելուց յետոյ դարձեալ բարձրանում էինք և պարապում մինչեւ գիշերւոյ ժամի 10-11-ը:

Այդ ժամանակամիջոցը թողել է իմ մէջ մի գեղեցիկ քաղցր յիշատակ, չը նայելով, որ երբեմն շատ դժուար էր լինում ինձ համար անտանելի շոք օրերում, ոտքով բարձրանալ այդ ամարանոցը, որը շատ բարձր դիրք ունի:

Վերջապէս Յուլիս ամսւոյ սկզբում «Պէպօ»-ն պատրաստեցաւ և այնուհետեւ՝ ամառանոցից (կրծանիսից) իջնելուն պէս, սկսեցինք նորա փորձերը, սկզբում Սօֆիա Մէլիք Նազարեանցի (տ. իգմիւրեանցի) բնակարանում, յետո իրա՝ Սունդուկեանցի տանը:

Համարեա երկու ամիս տեւում էին փորձերը, և վերջապէս Զատիկից յետոյ մենք իրաւունք ստացանք ներկայացում տալ քաղաքային թատրոնում՝ և տւինք «Պէպօն» 1871 թւի Ապրիլի 30-ին:

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ «ՊԵՊՕ»-Ի ՄԱՍԻՆ

Սիրելի Գեորգ

Դու վաղուց խնդրում էիր ինձ մէկ «բան գրել թատրոնի համար մեր թիֆլիզի պաժարիկների կեանքից»:

Երկար ժամանակ ես չէի կարողանում գտնել նիւթի առարկայ, թէեւ քո պատուէրը երբեք մտքիցս չէր հեռանում:

Բայց պատահմունքը վճռեց գործը:

Մէկ օր թատրոնումը ներկայացնւում էր հանգուցեալ Փուլինեանցի Մօլլիէրից շինած «ՎՈՒՐ ՏՐԱՔՎԻՍ ՊԵՏԻ ՊԱՍԿՎԻՍ»

պիէսան, որի մէջ դու կատարում էիր Շամիրի դերը:

Քո հագուստը, դէմքը, շարժումները, խաղը, ձայնը այս դերի մէջ, յանկարծ մտքումս ծագեցրին հարց թէ՛ ի՞նչպէս կը վարուէր Շամիրի նման մարդն այնպիսի դէպքում, երբ նրան մեր հարստահարողները մէկը փող պարտ լինէր և դա չը կամենար ճանաչել իր պարտքը:

Պէպօի հիմն գցուեցաւ. մնացածն ինքն ըստ ինքեան եկաւ. նա մանաւանդ այնպիսի մէկ դիպուած, որն այն ժամանակներում ես անձամբ փորձել էի մէկ հարուստի ինձ տուած խօսքի ուրանալուց, արդէն նախապատրաստել էր իմ գլխում Պէպօի հակառակորդի պատկերը:

Կազմելով հետզհետէ երեւակայութեանս մէջ պիէսայի կապը և նրա հերոսների տիպերը, ես ի նկատի ունեցայ, որ այն դասի մէջ, որի զանազան ներկայացուցիչներին այս տեղ արհամարհանքով աշուտանում են պաժարի, յօրի, կիկոս, կան մարդիկ, որոնք իրանց բարոյակաշուկեամբ, մեծահոգութեամբ և վեհանձնութեամբ կարող էին օրինակ լինել շատ և շատ բարձր դասի համարուած մարդկանց համար: Այս պատճառով Շամիրի բնաւորութիւնը պիէսայումս անցաւ կապուելու մէջ. իսկ նրանից բարձր տիպը միեւնոյն դասի ես իմ կարողութեան չափ աշխատեցի ցոյց տալ Պէպօի մէջ:

Երբ ես մօտաւորապէս պատմեցի քեզ Պէպօյի բովանդակութեան գլխաւոր սիրտը, այն օրից սկսած դու էլ ձեռք չը վեր առար ինձանից. ստուերի պէս հետեւում էիր ինձ՝ աշխատելով շուտով և շուտով հանել իմ գլխից քո սիրեկան Պէպօին և գրչի տալ իմ խօսքերը:

Եւ ահա 1870 թուի սկզբում, դու ըստ սովորականին վեր առար թուղթ և գրիչ և ես սկսեցի թելադրել քեզ Պէպօն, որը թէեւ շուտով ընդմիջուեց, բայց յիշեալ թուի Յուլիս ամսին, միեւնոյն ձեւով շարունակուեց և վերջացաւ կրծանիսում:

Թերթելով այժմ Պէպօի սկզբնական օրինակը, ես գտնում եմ, որ համարեա

ամբողջ պիէսան քո ձեռքով է գրած, բացի միքանի տեսիլներից, ուր քո բացակայութեան ժամանակ օգնել են ինձ Պ. Զաքարիա Բաբանասեանցը և մեր թատրոնի տաղանդաւոր աշխատակից Պ. Յովհաննէս Ամերիկեանը:

Շնորհակալութիւն յայտնելով յիշեալ անձանց, նա մանաւանդ Պ. Ամերիկեանին, որը ուրիշ շատ անգամ եւս օգնել է ինձ իմ թատրոնական ասպարիզում, ես չեմ կարող մոռանալ այն աշխատանքն և անձնանուիրութիւնը, որ դու կրել ես՝ թէ ներկայ հեղինակութեանս և թէ այլ գրուածներն մեծ մասի մէջ: Բայց առ այժմ խօսքս միայն Պէպօի վերայ է:

Քանի՛ և քանի անգամ գործքդ թողած ամառային շոք պապանաքին, ոտով եկել ես և գնացել կրծանիս, քանի՛ և քանի անգամ հետդ խորհրդակցել եմ, օգուտներ քաղել քո խորհուրդներից և ձանձրացրել քեզ իմ ծանր ու բարակ մասլահաթին: Երբեք քանի՛ և քանի անգամ ամբողջ ժամերով, գրիչը ձեռքիդ, անշարժ նստած ես եղել սեղանիս առաջ՝ ձեռացներով քեզ մէկ գրող մեքենայ, երբ ես հեղինակելով՝ բոլոր իմ շարժուածքների ազատութիւնն եմ վայելել. քանի՛ և քանի անգամ երբէք թերթեր ես լցրել իմ խօսքերով և ստէպ ստէպ հաճութիւնը ցոյց տալով, ոյժ ես տուել ինձ շարունակելու, երբէք յօնքերդ տօթելով կամ տասն անգամ կրկնել ես միեւնոյն վերջին խօսքերս կամ լուռ ու մունջ մնացել, առանց մէկ բառ արտաբանելու՝ կամենալով արգելք չը դնել մտքիս ընթացքին: Ո՛վ իմանայ ի՞նչ մըտքեր են ծագել քո մէջ այն ժամանակ, ի՞նչ մտքեր ես կլանել, ի՞նչ մտքեր գոհել, երբ ես ուղեղս փորելով աշխատելիս եմ եղել իմ միտքն ընդարձակել, իմ միտքը գեղեցկացնել: Միով բանիւ քո կամքը եմ թաղրել ես իմ կամքին, քո սովորութիւններն իմ սովորութիւններին, քո ժամանակն իմ ժամանակին. քո աշխատանքն նաև իմ ժամանակին. և այս բոլորը, բոլորը իմ աշխատանքին, և այս բոլորով լոյս միայն նրա համար՝ որ Պէպօն շուտով լոյս միայն նրա համար՝ որ Պէպօն թատրոնի հատեանի, դու քո սիրեկան թատրոնի հա-

մար մէկ նոր պիէսայ ճարես:

Մտաբերելով անցեալը, մտաբերելով այն ժամերը, երբ Պէպօն գրվում էր, երբ մեր մտերիմ խօսակցութեան մէջ Պէպօից մենք անդադար անցնում էինք դէպի նրա եղբայրակիցները, նրանցից դէպի ժողովուրդը, ժողովրդից ազգը, ես խոստովանում եմ որ այն ժամերը միշտ կը մնան իմ կեանքիս ամենաերջանիկ ժամեր:

Յիշում ես, սիրելի Գեորգ, այն առաւօտները, երբ արեգակը գլուխը դուրս բերելով հեռու հորիզոնում մէկ առանձին լոյս էր թափում ծառերի տերեւների և դիմացի սարի վերայ, մինչդեռ հազարաւոր թռչունների կանուխ երգը, շատ անգամ խօսքս բերանիս կիսակտոր թողնելով, տանում էր մեզ կարծես ուրիշ աշխարհ. յիշում ես բարեկամների այն փոքրիկ խումբը, որ շարունակ հաւաքվում էր իմ խոսքի, որ հանաքները, ծիծաղը, ընտանիքում, այն հանաքները, ծիծաղը, ուրախութիւնը, Եագօրի երեւակայական «սարի օմքերից», Եօվանէի ճիւղները խեղճ Եավանգուլի բայաթիները, ձկնորս Լօփիանի պարը, քո արհեստաւոր բարբարոսական եղանակով «ինձ ու իմ սիրեկան եարին», Ամերիկեանի երգերը, նրան ընծայած սարսափելի փունջը... և այլն և այլն. բոլորն ունէր իր գեղեցկութիւնը, իր հիացքը, մինչեւ անգամ այն անտանելի սեւ միջատների անթիւ զօրքը, որ մոմի առաջ հաւաքւելով մեր գլխին, մանաւանդ քո գլխին, շատ անգամ առիթ էին լինում Պէպօի թերթերը ցիր ու ցան անելու:

Յիշում ես դու թէլէթի այն բազմաթիւ ուխտաւորներին, որոնք կիւրակի առաւօտները ժամը չորսից սկսած, ներկայացնելով իրանցից մէկ գեղեցիկ գունաւոր ժապաւէն, անցնում էին մեր բնակարանի առաջ և բարձրաձայն պատմում միմեանց իրանց վշտերը: Քանի՛ իսկական Շուշան և Կէկէլ, քանի՛ յատուկ Պէպօ և Կակուլի ենք տեսել նրանց թուում. ես երբեք չեմ մոռանալ այն խօսքերը, որ մէկ կին նախելով մեր բալկոնին ասաց իր ընկերուհուն. «Էստի մըտիկ, սընք բաղուն էլ

դիւաններով ին, ես կի տանա մէ կոտորած սկսամի էլ չոնիմ» և այս դառը խօսքերը նա կնքեց ուրախ ծիծաղով, կարծես թէ խեղճի ուրախութեան աղբիւրը նրա խեղճութիւնը լինի: Քանի՛ այսպիսի դատողութիւններ են արտայայտել նրանք, քանի՛ մտքեր են զարթեցրել նրանց զանգատները: Ճշմարիտն ասած, տեսնելով այս մարդիկներին, լսելով և համակրելով սըրանց, հարկաւոր էր ինձանից շատ և շատ վարպետ նկարիչ, որ կարողանար արժանաւոր գոյներով նկարել սրանց. բայց երբ մարդ ապրելով ժողովրդի մէջ, նրա ուրախութեան հետ ուրախանում է, նրա տրտմութեամբ տրտմում, և այս զգացմունքները նա կարողացել է փոքր ի շատէ պատկերացնել, դա էլ արդարեւ մեծ բաւականութիւն է:

Ինչ և իցե ժամանակը հասաւ. Պէպօն ներկայացուեցաւ թատրոնում առաջին անգամ 1871 թուի Ապրիլի 30ին: Պէպօի դերը դու ինքզ կատարեցիր և կատարում

ես ցարդ բեմի վերայ: Դու տուիր նրան շունչ և կենդանութիւն, քո խաղը գերազանցեց զբուսածըից, իսկ Պ. Ամերիկեանը, որ ներկայացնում էր Պէպօի հակառակորդի պատկերը, և միւս մասնակցող անձինք իրանց հանճարաւոր խաղով օգնեցին մեզ աւելի պարզ ցոյց տալ հարստահարուած Պէպօի համակրական ոգին:

Այն ծափահարութիւնը, այն ընդունելութիւնը, որ առաջին ներկայացման օրը ստացայ հանդիսականներից թատրոնում, ես արդէն բաժանել եմ քեզ և քո ընկերներին հետ. այժմ թո՛ղ տուր ինձ, սիրելի Գէորգ, ինչքե՛ն քեզ ընդունել այս նուազ նուէրս իբրեւ յիշատակ քո չափազանց աշխատութեան և հարկ քո անսահման սիրոյն դէպի մեր թատրոնը:

Քո Գալըրիէ, Սոնդոնկեանց

Թիֆլիզ
6 Նոյեմբերի 1876
(Շաբաթ օրը)

ԱՐԱՄ ԷՐԵՄԵԱՆ

4 6 8 2 5 7 S U L

Երբ մի առ մի
Աստղերն ամբողջ կը մարին,
Եւ ցըրտագին
Ձմրան քամին
Կը փչէ,
Յիշէ,
Տըրտում հոգի,

Որ այն ատեն նինջն ամենէն անուշն է:

Երբ յոգնած էս
Ու կը դողատ ծաղկի պէս,
Երբ մէջքդ է կոր,
Դէմքդ է սըժգոյն,
Մագդ է ձիւն,
Յիշէ,
Սրբաի հատոր,

Որ քեզ համար ա՛լ ամէն ճիգ ունայն է:

Ուստի մոռցիր
Անպատասխան հարցումն հին.

Քեզմէ լաւերն
Այս ափունքէն
Մեկնեցան .
Պորկէ աղեղն

Ու արձակէ նետն յետին,

Հապա նետուէ անդունդն ի վար լըռութեան...

ՎԱՀՐԱՄ ՍՅԵԱՆ

ՍՄԲՍՏ - ԲԻԼԲՍՏ

ԼԵՌՆԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

(ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ)

(Ա. ՇՐՋԱՆ. 1862-1870)

(Շար. տես թագմավէպ, 1935, էջ 91)

£

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԽԱՂԵՐ

Հաշիւներէն վերջը, նորապսակ հարսին ծնողքն ու ազգականները չէին տեսնուեր ատեն մը, կարծես թէ պաղուծիւն մը կը տիրէր մեր և իրենց միջեւ. յարաբերութիւնս ներք զաղբած էին. մայրս պատուիրած էր ինծի չերթալ տիկին թուրվանտի տունը. բայց ես բան մը չէի հասկնար այս խորհրդաւոր վերապահումներէն:

Օր մը մեր տունն սկսան հայտ շաղիւ-
այտ անգամ հայսը թթուեցուցին. փաթ-
թեկով ու տաք պահելով զայն. բան մը,
որ Զեթունցիներուն համար անսովոր էր.
քանի որ իրենք առհասարակ անխմոր հաց
կը գործածեն: Հայսը խմորուած էր, փոք-
րիկ հացեր շինեցին, իւղի մէջ տապկեցին,
հացիկներ կը կոչէին այդ համիդ խմորե-
ղէնները, զորս խնամիրն տունը պիտի տա-
նէին ուրիշ ընծաներու հետ: Վերջապէս
մայրս հաճեցաւ ինծի իմացընել թէ՛ Բա-
րեկենդան էր:

Գանիրքները ծածկուեցան բոլոր հասակ-
ներէն. իսկ ես, մեր տան առջեւի տանիքը
կեցեր, կը դիտէի. մեծ բազմութիւն մը
հաւաքուած էր հոն: Օղը քիչ մը ցուրտ էր,
բայց արեւը՝ փայլուն, ամէն տան առջեւ
խումբ խումբ կիներ ու մարդեր, տանիք-
ներուն վրայ կը խաղալին ձերեր ու երկ-

տասարդներ: Զուարճալի էր տեսնել այլև
ւորներ, որոնք թխագեղ երիտասարդներու
հետ կը մրցէին: Դիտող գեղեցիկ սեռին
աչքերը սեւեռուած կը յառէին սովորա-
բար 18-20 տարու կտորիճներու վրայ,
հոն իրենք իրենց կ'ընտրէին ապագանին,
իրենց սրտին սիրածը: Սրտի նշանախո-
սութիւնը կը կատարուէր հոն: Տեսնել
պէտք էր կայտառ պատանիներ, որոնց
արիւն քրտինք կը մտնէին, աւելի եռան-
դով կը խաղալին, ամէն մէկը ջանալով
յաղթել հակառակորդին: Քաջութիւնը կը
փնտռուէր հոն ու լոկ քաջութիւնը որ շատ
սուղ էր, որովհետեւ վարձատրութիւնը
պիտի ըլլար ճշմարիտ սէրը: Էս այն ա-
տեն հագիւ հինգ տարու մանկիկ մը, վեր-
ջէն, շատ վերջէն հասկցայ թէ՛ բարեկին-
դանի խաղերը՝ մեր լեռնցիներուն նախա-
սիրած ու չքնաղ առիթներն էին, որոնց
շնորհիւ՝ բոլորովին անծանօթ քաջորդի
մը կը յաջողի զինքը ծանօթացնել և ստա-
նալ իր կտրճութեան վարձը: Այսպէս,
խաղերը կը շարունակէին մինչեւ իրիկուն,
ժամը մէկ անգամ խաղը կը փոխուէր:

Ոչնչ խաղերէն մէկ քանինները, որոնք պահուած են տակաւին յիշողութեանս մէջ, տարիներ անցնելէ ետքը:

Խաղացողները հաւասար թիւով կը շա-
րուին զէմ առ զէմ տանիքներուն երկու
ծայրերը, մէկ կողմէն կ'արձակուի մէկը,